



ARMSWISSBANK
Private & Investment Banking

**ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ
“ԱՐՑԱԽ ՀԷԿ” ԲԲԸ-ՈՒՄ**

Արկադի Փինաչյան

*“ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ” ՓԲԸ
կորպորատիվ ֆինանսների
բաժնի պետ*

© 2009 ARMSWISSBANK



Հիմնական սկզբունքներ

❖ Ընկերության բոլոր հասարակ բաժնետոմսերը տալիս են իրենց սեփականատերերին միևնույն իրավունքները:

❖ Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերին չի կարող տրամադրվել լրացուցիչ ձայնի իրավունք:



Հիմնական իրավունքները

Հասարակ բաժնետոմսը տալիս է հետևյալ իրավունքները.

1. Մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին
2. Հանդես գալ որոշակի առաջարկություններով
3. Մասնակցել Ընկերության կառավարմանը
4. Ստանալ շահութաբաժիններ
5. Առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը



Հիմնական իրավունքները

6. Ստանալ տեղեկատվություն
7. Պահանջել փորձագետ Ընկերության գործունեությանը վերաբերող հաշվետվությունները ստուգելու նպատակով
8. Բաժնետերերի ժողովում իր իրավունքները իրականացնել երրորդ անձին լիազորելու միջոցով
9. Առաջարկություններով հանդես գալ բաժնետերերի ժողովում
10. Բաժնետերերի ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով



Հիմնական իրավունքները

11. Հայցով դիմել դատարան՝ բաժնետերերի ժողովի կողմից ընդունված և հակասող որոշումների բողոքարկման նպատակով
12. Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած լուծարային արժեքը
13. Օտարել կամ այլ ձևով փոխանցել իր բաժնետոմսը
14. Օգտվել կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:



Տեղեկությունների ստացում

Բաժնետերերն իրավունք ունեն
ճանոթանալ Ընկերության
փաստաթղթերին, բացառությամբ
առևտրային, արտադրական և այլ
գաղտնիք կազմող տեղեկությունների



- Բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը հնգօրյա ժամկետում պարտավոր է նրան տրամադրել հրապարակման ենթակա փաստաթղթերի պատճենները՝ գանձելով պատրաստման և առաքման ծախսերը չգերազանցող վճար:
- Վերջին տարեկան հաշվետվության և Վերստուգող հանձնաժողովի եզրակացության պատճենների անվճար ստացում:

Շահութաբաժինների ստացում

- ✓ Կարող են վճարվել եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժիններ: Շահութաբաժինները վճարվում են միայն ՀՀ դրամով:
- ✓ Շահութաբաժինները վճարվում են Ընկերության կուտակված շահույթից:
- ✓ Եռամսյակային և կիսամյակային շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը:
- ✓ Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ:



Շահութաբաժինները վճարվում են բանկային հաշիվներին կամ փոստային հասցեներին գումարների փոխանցման միջոցով: Տեղեկությունների բացակայության դեպքում շահութաբաժինները կարող են վճարվել Ընկերության դրամարկղից առձեռն:

Շահութաբաժինների ստացում

Շահութաբաժնային քաղաքականությունը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա.



- ❑ Շահութաբաժինների վճարում Կուտակված շահույթի առկայության դեպքում, իսկ տնօրինության տակ մնացած շահույթն օգտագործվում է վերաներդրման համար,
- ❑ Ընկերության և նրա բաժնետերերի շահերի օպտիմալ համադրություն,
- ❑ Ընկերության ներդրումային գրավչության և նրա կապիտալիզացիայի բարձրացման անհրաժեշտություն,
- ❑ Բաժնետերերի իրավունքների հարգում և խիստ պահպանում,
- ❑ Շահութաբաժինների չափի սահմանման և դրանց վճարման մեխանիզմների թափանցիկություն,

Ժողովի մասնակցություն

- ❑ Ժողովների գումարում հեռակա քվեարկության և համատեղ ներկայության կարգով:
- ❑ Ժողովին մասնակցությունը անձամբ կամ լիազոր ներկայացուցչի միջոցով:
- ❑ Հեռակա քվեարկությամբ անցկացվող ժողովին մասնակցությունը տեղի է ունենում քվեաթերթիկը լրացնելու և Ընկերություն ներկայացնելու միջոցով:
- ❑ Համատեղ ներկայությամբ անցկացվող ժողովին (տարեկան ժողով) մասնակցությունը տեղի է ունենում, ինչպես քվեաթերթիկը լրացնելու և Ընկերություն ներկայացնելու, այնպես էլ ժողովին ներկա գտնվելու միջոցով, իսկ քվեարկությունը իրականացնել օրակարգի հարցերը քննարկելուց հետո:



Ժողովին մասնակցություն

- ✓ Ժողովի ծանուցման ստացում առնվազն 30 օր առաջ, խորհրդի անդամի ընտրելու դեպքում՝ առնվազն 45 օր առաջ: Քվեաթերթիկների տրամադրում
- ✓ Տեղեկությունների ստացում էլեկտրոնային և/կամ փաստաթղթային եղանակով և նախատեսված կապի միջոցով, իսկ դրա բացակայության դեպքում՝ Ընկերությունից առձեռն
- ✓ Քվեարկության արդյունքներին և ժողովի կողմից ընդունված որոշումներին ծանոթացում Ընկերության ինտերնետային էջում այն բացահայտելու միջոցով կամ պահանջի ներկայացման հիման վրա:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ